

Հաստատված է
«Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի
գիտական խորհրդի 2023թ. հունիսի 9-ի նիստում
Արձանագրություն N°01-06/23
Գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր՝
Ե.Վ.Վարդանյան

ԿԱՐԳ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ»
ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՎ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) կողմից «Տարվա լավագույն հետազոտություն» անվանակարգով մրցանակների տրամադրման ոլորտային ուղղությունները, մրցույթի պայմանները, ներկայացվող փաստաթղթերը, հայտերի ներկայացման, գնահատման և մրցույթի հաղթողին որոշելու ընթացակարգերը:

2. Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության քաղաքացի և Համալսարանի հիմնական աշխատող դասախոսները, գիտաշխատողները, ասպիրանտները, հայցորդները և դոկտորանտները:

3. Մրցույթի կազմակերպումը, հայտերի քննարկումը և մրցույթի արդյունքների ամփոփումն իրականացնում է Համալսարանի գիտատեխնիկական խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ):

4. Մրցանակ(ներ)ի համար նախատեսված միջոցները և մրցանակների անվանակարգերն ու քանակը սահմանվում են համալսարանի տարեկան բյուջեով:

II. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

5. Մրցույթն անցկացվում է ներքոհիշյալ ոլորտներին վերաբերող՝ տվյալ տարվա ընթացքում հրապարակված հետազոտությունների մասին հայտերով.

1) Տեխնիկական գիտությունների ոլորտ (շինարարություն և հարակից ոլորտներ).

- Շինարարական նյութեր և պատրաստվածքներ,
- Հիմքեր և հիմնատակեր, ստորգետնյա կառուցվածքներ,
- Շինարարական կոնստրուկցիաներ և երկրաշարժադիմացկուն շինարարություն,
- Շինարարական արտադրության տեխնոլոգիա և կազմակերպում,
- Շինարարական մեխանիկա,
- Հիդրոտեխնիկա և հիդրոէներգետիկա,
- Հիդրավլիկա և հնժեներական հիդրոլոգիա,
- Տրանսպորտային ենթակառուցվածքներ (ճանապարհներ, կամուրջներ),
- Ներքին և արտաքին ինժեներական սարքավորումներ ու ցանցեր

(ջրամատակարարում և ջրահեռացում, ջերմագազամատակարարում, էլեկտրամատակարարում, օդափոխություն և օդորակում),

- Շինարարական մեքենաներ և երթևեկության կազմակերպում,
- Ինժեներական գեոդեզիա,
- Մոդելավորումը և տեղեկատվական տեխնոլոգիաները շինարարությունում:

2) Ճարտարապետության ոլորտ.

- Շենքերի և շինությունների ճարտարապետություն,
- Քաղաքաշինություն (տարածական պլանավորում),
- Ճարտարապետության տեսություն և պատմություն, ճարտարապետական

հուշարձանների վերականգնում,

- Մոդելավորումը և տեղեկատվական տեխնոլոգիաները ճարտարապետությունում:

3) Դիզայնի ոլորտ.

4) Տնտեսագիտության (շինարարությունում) ոլորտ.

5) Կառավարման (ճարտարապետության, շինարարության, դիզայնի, զբոսաշրջության)

ոլորտ:

III. ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ ՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

6. Յուրաքանչյուր տարվա մրցույթի անցկացման մասին հայտարարությունը Խորհուրդը հրապարակում է Համալսարանի կայքում՝ մինչև հաջորդ տարվա հունվարի 15-ը:

7. Հայտերը և սույն կարգի 8-րդ կետում նշված փաստաթղթերը ներկայացվում են Խորհրդին՝ մրցույթի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելուց հետո մեկամսյա ժամկետում:

8. Մրցույթին մասնակցելու համար Խորհրդին ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) Հայտը (հավելված N 1),

2) հետազոտության նկարագիրը՝ ստորագրված հայտատուի կողմից, հետևյալ պարտադիր մասերով.

➤ հետազոտության թեմայի հիմնավորումը և արդիականությունը,

➤ իրականացման գիտական մեթոդները,

➤ գիտական նորույթը,

➤ ստացված արդյունքները և կիրառական նշանակությունը,

3) հրապարակված հետազոտությունը՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով՝ նշելով պարբերականը և դրա հերթական համարը,

4) համապատասխան ամբիոնի եզրակացությունը՝ թեմայի արդիականության, գիտական նորույթի և կիրառական նշանակության վերաբերյալ,

5) անձնագրի պատճեն,

6) համահեղինակությամբ իրականացված հետազոտության պարագայում՝ յուրաքանչյուր հեղինակի ներդրումը հետազոտությունում:

9. Հայտը չի քննարկվում, եթե չի բավարարում մրցույթի պայմաններին:

10. Խորհուրդը, հայտերն ընդունելու ժամկետը լրանալուց հետո երկշաբաթյա ժամկետում իրականացնում է դրանց գնահատում՝ հետևյալ բաղադրիչներով.

1) հետազոտության արդիականությունը –մինչև 2 միավոր,

2) հետազոտության գիտական մեթոդները –մինչև 2 միավոր,

3) գիտական նորույթը –մինչև 3 միավոր,

4) կիրառական նշանակությունը – մինչև 3 միավոր,

5) պարբերականի վարկանիշը –ՀՀ ԲՈԿ-ի կողմից ընդունված պարբերական՝ 1 միավոր, Web of Science և(կամ) Scopus գիտական շտեմարաններում գրանցված, բայց ազդեցության գործակից (Impact Factor) չունեցող ամսագրերում՝ 3 միավոր, այլ միջազգային

վարկանիշավորման ցանկերում (PIHL, DOAJ, IndexCopernicus, EBSCOhost, IEEE) ընդգրկված պարբերական՝ 2 միավոր, ազդեցության գործակից ունեցող պարբերական՝ 4-6 միավոր՝ կախված Journal Citation Reports (<https://jcr.clarivate.com>) հարթակում զբաղեցրած կվարտիլից (3,4 կվարտիլ՝ 4 միավոր, 2 կվարտիլ՝ 5 միավոր, 1 կվարտիլ՝ 6 միավոր):

11. Գնահատումը (բացառությամբ սույն կարգի 10-րդ կետի 5-րդ ենթակետի բաղադրիչի) իրականացնում են խորհրդի բոլոր անդամները՝ սույն կարգի 2-րդ հավելվածի գնահատման թերթիկի ձևանմուշին համապատասխան:

12. Խորհրդի անդամների գնահատականների միջինացված միավորներն արձանագրվում են հայտերի գնահատման ամփոփ աղյուսակում՝ սույն կարգի 3-րդ հավելվածի ձևանմուշին համապատասխան:

13. Մրցույթում հաղթող է ճանաչվում գնահատման արդյունքում առավելագույն միավոր ստացած հետազոտությունը:

14. Գնահատման արդյունքների հիման վրա Խորհուրդը կազմում է արձանագրություն մրցույթում հաղթող ճանաչված հայտի վերաբերյալ:

15. Արձանագրությունը հաստատվում է բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ (հավելված 4):

16. Արձանագրությունը ստորագրում են Խորհրդի բոլոր անդամները:

17. Խորհրդի արձանագրությունը՝ հավանության արժանանալուց հետո երկօրյա ժամկետում տրամադրվում է համալսարանի ռեկտորին:

18. Արձանագրության հիման վրա 5-օրյա ժամկետում ռեկտորի հրամանով հաստատվում է մրցույթում հաղթող թեման և հեղինակին (հեղինակներին)՝ նշելով մրցանակի գումարի չափը և դրա բաշխումը հեղինակների միջև՝ համահեղինակությամբ իրականացված հետազոտության դեպքում:

Գիտական քարտուղար՝
„09,, հունիսի, 2023թ.

Լ.Հ. Լևոնյան

Գիտխորհրդի որոշում N°01-06/23

Նույն համալսարանի ----- ամբիոնի

(անուն, հայրանուն, ազգանուն, գիտական աստիճան և կոչում)

(հասցե)

(հեռախոս, էլ. հասցե)

Հ Ա Յ Տ

Խնդրում եմ ընդունել «Տարվա լավագույն գիտական հետազոտություն» մրցույթի մասնակցության համար մրցույթի պայմաններով սահմանված հետևյալ փաստաթղթերը՝

1. Հետազոտության նկարագիրը՝ հետևյալ մասերով.

- հետազոտության ոլորտը,
- թեմայի հիմնավորումը և արդիականությունը,
- իրականացման գիտական մեթոդները,
- գիտական նորույթը,
- արդյունքները և կիրառական նշանակությունը.

2. Հրապարակված հետազոտությունը՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

3. -----ամբիոնի եզրակացությունը՝ թեմայի արդիականության և կիրառական նշանակության վերաբերյալ.

4. Անձնագրի պատճեն.

5. Հետազոտության համահեղինակների ներդրումը

1) -----

2) -----

Հաստատում եմ, որ ծանոթացել եմ մրցույթի պայմաններին և դրանց հետ համաձայն եմ:

Դիմող՝ _____ (_____)

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

«_____»

202 թ.

**ՃՇՀԱՀ «Տարվա լավագույն գիտական հետազոտություն» մրցույթին ներկայացված
հայտերի գնահատման թերթիկ**

Գիտատեխնիկական խորհրդի անդամ՝

/ազգանուն, անուն/

№	Թեմայի անվանումը	Միավորներն ըստ գնահատման բաղադրիչների				Մեջբերումը
		Արդյունավետությունը	Մեթոդի մեթոդականությունը	Մեթոդի նորությունը	Արդյունավետության նշանակությունը	
		0-2	0-2	0-3	0-3	
1						
2						
3						
4						
5						
6						
7						
8						

.....
ստորագրություն

.....20 թ.

ՃՇՀԱՀ «Տարվա լավագույն գիտական հետազոտություն» մրցույթին ներկայացված հայտերի գնահատման ամփոփ աղյուսակ

№	Թեմայի անվանումը	Խորհրդի անդամների նշանակված գնահատականների միջին միավոր	Պարբերականի վարկանիշային միավոր	Ընդամենը
1				
2				
3				
4				
5				
6				
7				
8				

Գիտատեխնիկական խորհրդի նախագահ՝

Գիտատեխնիկական խորհրդի անդամներ՝

- | | |
|---------|----------|
| 1. | 8. |
| 2. | 9. |
| 3. | 10. |
| 4. | 11. |
| 5. | 12. |
| 6. | 13. |
| 7. | 14. |

.....20 թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի
Գիտատեխնիկական խորհրդի
«Տարվա լավագույն գիտական հետազոտություն» անվանակարգով մրցույթում հաղթող
ճանաչված թեմայի վերաբերյալ

Հաշվի առնելով մրցույթի հայտերի գնահատման արդյունքները, ՃՇՀԱՀ
գիտատեխնիկական խորհուրդը որոշում է.

1.20--- թ. մրցույթի հաղթող ճանաչել -----
----- թեման.

Հետազոտության հեղինակ /ներ/

- 1) -----
- 2) -----
- 3) -----

Հետազոտությունը հրապարակվել է -----

2. Սույն արձանագրությունը ներկայացնել ՃՇՀԱՀ ռեկտորի հաստատմանը:

Գիտատեխնիկական խորհրդի նախագահ՝ -----

Գիտատեխնիկական խորհրդի անդամներ՝

- | | |
|----------|-----------|
| 1. ----- | 8. ----- |
| 2. ----- | 9. ----- |
| 3. ----- | 10. ----- |
| 4. ----- | 11. ----- |
| 5. ----- | 12. ----- |
| 6. ----- | 13. ----- |
| 7. ----- | 14. ----- |

„-----“ 20 թ.